հասկանալ թվիթերի ստանձնած դերը Իրանում տեղի ունեցած իրադարձություններում» գրել է Գոլնազ Էսֆանդիարին, անցյալ ամառ, «Ֆորին Փոլիսիում⁹»: «Այլ կերպ ասած, Իրանում թվիթեր հեղափոխություն տեղի չի ունեցել»: Հայտնի բլոգերների խումբը, ինչպես Էնդրյու Սալլիվանը, որը պահպանում էր սոցիալական մեդիայի դերը Իրանում,- շարունակեց Էսֆանդիարին, սխալ է ընկալել իրավիճակը: Արևմուտքի լրագրողները, ովքեր չկարողացան կապ հաստատել, կամ էլ մտահոգված չէին կապ հաստատելու իրանական հասարակության հետ, պարզապես թերթում էին անգլալեզու թվիթերյան գրառումները՝ #iranelection հեշթեգով», - գրել է նա: -«Հաշվի առնելով այս ամենը, ոչ ոք չէր մտածում, թե ինչու են Իրանում բողոքի ցույցերը համակարգող մարդիկ գրել ցանկացած լեզվով, բացի պարսկերենից»:

Այսպիսի մեծամտությունն ինչ-որ տեղ սպասելի է: Նորարարները հակված են ինքնապաշտ լինելու: Նրանք հաճախ ցանկանում են վերցնել յուրաքանչյուր անհիմն փաստ և փորձել իրենց նոր մոդելի մեջ: Ինչպես գրել է պատմաբան Ռոբերտ Դարթոնը. «Ներկայիս հաղորդակցման տեխնոլոգիաների հրաշքները սխալ ընկալում են առաջ բերել անցյալի մասին, նույնիսկ այնպիսի զգացում, որ հաղորդակցությունը պատմություն չունի, կամ որևէ կարևոր նշանակություն չունեն հեռուստատեսության և ինտերնետի ի հայտ գալուց առաջ: Այստեղ՝ աշխատավայրում, սոցիալական լրատվամիջոցների հանդեպ հսկայական ոգևորության մեջ մեկ այլ բան կա: Ամերիկյան պատմության մեջ սոցիալական ընդվզման ամենաառաջնային դրվագներից մեկից հիսուն տարի անց մենք կարծես մոռացել ենք, թե որն է ակտիվիզմը:

Հազար ինը հարյուր վաթսունականների սկզբին Գրինսբորոն այն վայրն էր, որտեղ ռասայական անհնազանդությունը պարբերաբար հանդիպում էր բռնության: Այն չորս ուսանողները, ովքեր առաջինն էին նստել սեղանների մոտ ահաբեկված էին: «Ենթադրում եմ, որ եթե մեկը գար իմ հետևից և գոռար «Բո», աթոռիցս կընկնեի», -

⁹ ամերիկյան լրատվական պարբերական, որը հիմնադրվել է 1970-ին և կենտրոնացած է գլոբալ, ընթացիկ իրադարձություններին և ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող նյութեր հրատարակելով:

նրանցից մեկն ասել էր ավելի ուշ: Նաստացույցի առաջին օրը խանութի մենեջերը տեղեկացրել էր ոստիկանապետին, ով անմիջապես երկու սպա ուղարկեց խանութ: Երրորդ օրը սպիտակամորթերի մի հանցախումբ էր հայտնվել ճաշի դահլիճում և ակնհայտ կերպով կանգնեցին ցուցարարների հետևում` անելով սպառնալիքով լի և դժգոհ այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են` «Կեղտամազ նեգրեր»: Այցելել էր տեղական Կու-կլուքս-կլան¹⁰-ի առաջնորդը: Շաբաթ օրը, երբ լարվածությունն աճել էր, ինչ-որ մեկը հայտարարեց, թե ռումբ կա, և ամբողջ խանութը ստիպած եղավ տարհանվել:

Հնարավոր վտանգներն ավելի պարզ էին նաև Քաղաքացիական իրավունքների Շարժման¹¹ ևս մեկ քարոզչական արշավում` 1964 թ.-ի Միսիսիպիի Ազատության ամառային նախագծում: Ուսանողական ոչ բռնի համակարգող հանձնաժողովը հավաքագրեց Հյուսիսում բնակվող հիմնականում սպիտակամորթ կամավորների` Ազատության Ղարոցներ դեկավարելու, սևամորթ ընտրողների գրանցելու և Հարավում քաղաքացիական շարժման մասին իրազեկելու համար: Նրանց հրահանգվել էր. «Ոչ ոք ոչ մի տեղ միայնակ չի գնալու, ոչ մեքենայով, և ոչ էլ գիշերով»: Միսիսիպի ժամանելուց օրեր անց, երեք կամավորներ` Մայքլ Շվերները, Ջեյմս Չեյնեյը և Էնդրյու Գուդմանը, առևանգվեցին և սպանվեցին, իսկ մնացած ամառվա ընթացքում` սևամորթներին պատկանող երեսուներթ եկեղեցիներ հրկիզվեցին, իսկ տասնյակ թաքստոց-տներ` ռմբակոծվեցին, կամավորները ծեծի ենթարկվեցին, գնդակահարվեցին, ձերբակալվեցին: Նրանց քարշ տվեցին զինված անձանցով լցված պիկապ բեռնատարներով: Ծրագրում գտնվողների մեկ քառորդ մասը հրաժարվեց: Ակտիվիզմը, որը մարտահրավեր է նետում ստատուս քվին` բուն խնդիրները արմատախիլ անելով, թուլամորթների համար չէ:

¹⁰ Կու-կլուքս-կլան (ԿԿԿ) (անգլ.՝ Ku-Klux-Klan, KKK), ռասիստական-ահաբեկչական գաղտնի կազմակերպություն ԱՄՆ-ում: Ստեղծվել է 1865 թվականին` սևամորթների և նրանց սպիտակամորթ դաշնակիցների դեմ պայքարելու համար: XIX դարի 70-ական թվականների սկզբից անցել է ընդհատակ: Ներկայումս Կու-կլուքս-կլանի ահաբեկչական գործողություններն ուղղված են ԱՄՆ-ի առաջադիմական կազմակերպությունների դեմ:

¹¹ Civil Rights Movement - Սևամորթների իրավունքների համար պայքար: ԱՄՆ-ի կարևորագույն ձեռքբերումներից մեկը երկրի սևամորթ բնակչության խնդրի կարգավորումն էր, որ սրությամբ դրվեց 1950–1960–ական թվականներին: 1954 թվականին վերացվեց սևամորթ և սպիտակամորթ երեխաների տարանջատ ուսուցումը:

Ի՞նչն է մարդկանց ունակ դարձնում այս տեսակի ակտիվության: Սթենֆորդի սոցիոլոգ Դուգ Մաք-Ադամը «Ազատության Ամառ» ծրագրից հրաժարվածներին համեմատեց մնացած մասնակիցների հետ և պարզեց, որ առանցքային տարբերությունը, ինչպես և սպասվում էր, գաղափարական մոլեռանդությունը չէր: «Բոլոր դիմորդները, հավասարապես թե՛ մասնակիցները, թե՛ հրաժարվողները, հանդես են գալիս որպես ամառային ծրագրի նպատակների և արժեքների խիստ հավատարիմ հենակետեր», - եզրափակեց նա: Առավել կարևոր էր դիմորդների՝ շարժման կազմակերպիչների հետ ունեցած անձնական կապի աստիճանը: Բոլոր կամավորներից պահանջվում էր տրամադրել անձնական շփման ցուցակը, այն մարդկանց, ում նրանք ցանկանում էին տեղեկացնել իրենց գործունեության մասին: Շատ ավելի հավանական է, որ մասնակիցները, քան հրաժարվողները, ունենային մտերիմ ընկերներ, որոնք նույնպես պատրաստվում էին մեկնել Միսիսիպի: ՄքԱդամի եզրակացությամբ, բարձր ռիսկային ակտիվությունը «ամուր կապի» երևույթ է:

Այս տենդենցը կրկին ու կրկին ի հայտ է գալիս: «Կարմիր բրիգադներ»-ի՝ յոթանասունականների մի իտալական ահաբեկչական խմբավորման ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նոր անդամների յոթանասուն տոկոսը առնվազն արդեն մեկ լավ ընկեր ունի կազմակերպությունում: Նույն պնդումը ճիշտ է՝ Աֆղանստանում Մոջահեդին խմբավորմանը¹² միացող տղամարդկանց համար ևս: Նույնիսկ այն հեղափոխական գործողությունները, որոնք ինքնաբուխ են թվում, ինչպես Արևելյան Գերմանիայում անցկացվող ցույցերը, որոնք հանգեցրին Բեռլինի պատի անկմանը, հիմնարար և ուժեղ կապի երևույթներ են: Արևելյան Գերմանիայի ընդդիմադիր շարժումը բաղկացած էր մի քանի հարյուր խմբավորումներից՝ ամեն մեկը մոտավորապես մեկ տասնյակ անդամներով: Յուրաքանչյուր խումբ սահմանափակ կապի մեջ էր մյուսների հետ. Այն ժամանակ արևելքի գերմանացիների տասներեք տոկոսը միայն նույնիսկ հեռախոս ուներ: Նրանք միայն գիտեին, որ երկուշաբթի օրերին՝ գիշերը, մարդիկ հավաքվում էին Լայպցիգի կենտրոնում գտնվող

¹² Մոջահեդ - աֆղանական ընդդիմության զինվոր, (պաշտանվ.) ջիհադի մասնակից, արաբերեն բառացի՝ «ճիգեր կատարող մարտիկ»

Սուրբ Նիկոլաս եկեղեցու մոտակայքում, որպեսզի բարձրաձայնեն իրենց զայրույթը պետության դեմ: Իսկ թե իրենցից ովքեր կմասնակցեին, հիմնական որոշողը «առանցքային ընկերներն էին»: Որքան ավելի շատ ընկերներ ունեիք, ովքեր քննադատում էին ռեժիմը, այնքան ավելի հավանական է, որ դուք նույնպես կմիանայիք բողոքի ցույցին:

Այսպիսով, Գրինսբորոյի ճաշարանում չորս առաջին կուրսեցիների` Դեյվիդ Ռիչմոնդի, Ֆրանկլին ՄքՔեյնի, Էգել Բլերի և Ջոզեֆ ՄքՆիլի մասին մի վճռորոշ փաստ կար. դա իրենց հարաբերություններն էին միմյանց հետ: ՄքՆիլը Բլերի սենյակակիցն էր Հյուսիսային Կարոլինայի գյուղատնտեսության և տեխնիկական համալսարանի Սքոթ Հոլ հանրակացարանում: Ռիչմոնդը ՄկՔեյնի հետ նրանց վերևի հարկում էր բնակվում: Բլերը, Ռիչմոնդը և ՄկՔեյնը բոլորը գնացել էին Դուդլիի ավագ դպրոց: Չորսով, թաքուն, գարեջրով սողոսկում էին հանրակացարան և մինչև ուշ երեկո Բլերի և ՄքՆիլի սենյակում զրուցում: Բոլորով հիշում էին Էմմեթ Թիլլի սպանությունը` 1955 թ.-ին, նույն տարում Մոնտգոմերի ավտոբուսում տեղի ունեցած բոյկոտը, իսկ 1957-ին` Լիթլ Ռոքում տեղի ունեցած ճակատումը կամ բախումը: Կուլվորթում նստացույցի գաղափարը ՄքՆիլին էր: Մոտ մեկ ամիս դա էին քննարկում: ՄքՆիլը մտավ հանրակացարանի սենյակ և հարցրեց մնացածին, թե արդյոք նրանք պատրաստ են: Մի պահ բոլորը լռեցին և ՄքՔեյնը խոսեց այնպես, ինչպես բնորոշ էր միայն միմյանց հետ մինչև ուշ գիշեր զրուցող մարդկանց: «Թուլամորթ ե՞ք, ինչ է»: Հաջորդ օրը Էգել Բլերը քաջություն ունեցավ մի բաժակ սուրճ խնդրելու, քանի որ ավագ դպրոցի իր երկու լավ ընկերները և սենյակակիցը նրա կողքին էին:

Ակտիվիզմի այն տեսակը, որն ասոցացվում է սոցիալական մեդիայի հետ ընդհանրապես նման չէ սրան: Սոցիալական մեդիայի հարթակները թույլ կապերի շուրջ են կառուցված: Թվիթերի միջոցով կարող ես հետևել այնպիսի մարդկանց կամ քեզ կարող են հետևել այնպիսի մարդիկ, ում երբևէ չես էլ հանդիպել: Ֆեյսբուքը ծանոթություններդ արդյունավետորեն կառավարելու գործիք է, որպեսզի շփվես այն մարդկանց հետ, ում հետ այլ կերպ չէիր կարողանա կապ պահել: Դրա համար էլ

Ֆեյսբուքում կարող ես հազար` այսպես կոչված ընկեր ունենալ, ինչպես իրական կյանքում երբեք չէիր կարող:

Շատ առումներով, սա, իհարկե, հիանալի է: Թույլ կապերի մեջ ուժ կա, ինչպես դիտարկել է սոցիոլոգ Մարկ Գրանովետտերը: Մեր ծանոթները, ոչ թե մեր ընկերները, մեր նոր տեղեկատվության և գաղափարների ամենամեծ աղբյուրն են: Համացանցը մեզ թույլ է տալիս հրաշալի արդյունավետությամբ օգտագործել այս տեսակի հեռավոր կապերի հզորությունը: Այն շատ մեծ նշանակություն ունի նորարարության տարածման, միջդիսցիպլինար համագործակցության, վաճառողներին և գնորդներին համապատասխանեցնելու, և ժամադրվող աշխարհի լոգիստիկ գործառնությունների մեջ: Այնուամենայնիվ, թույլ կապերը հազվադեպ են հանգեցնում բարձր ռիսկային ակտիվիզմի:

«Դրագոնի էֆեկտը. Սոցիալական մեդիան օգտագործելու արագ, արդյունավետ և հզոր եղանակների սոցիալական փոփոխությունների հանգեցնում է համար» նոր գրքում, բիզնեսի խորհրդատու Էնդի Սմիթը և Սթենֆորդի բիզնեսի դպրոցի դասախոս Ջեննիֆեր Աաքերը պատմում են Սամիր Բեթիայի պատմությունը: Սիլիկոնյան հովտի մի երիտասարդ ձեռնարկատիրոջ, ով ախտորոշվել էր սուր միլոգեն լեյկոզով: Այն հիանալի կերպով պարզաբանում է սոցիալական մեդիայի ուժեղ կողմերի մասին: Բեթիային անհրաժեշտ էր ոսկրածուծի փոխպատվաստում, բայց նա չէր կարողացել իր հարազատների և ընկերների մեջ համապատասխան մեկին գտնել: Դոնոր գտնելու հավանականությունը նույն էթնիկ խմբում բավականին մեծ էր, սակայն ոսկրածուծի ազգային տվյալների բազայում քիչ էին հարավ-ասիացիների մասին տվյալները: Այսպիսով, Բեթիայի գործընկերը, նրա առողջական վիճակը բացատրող էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկեց ավելի քան չորս հարյուր մարդու, որոնք էլ, ամեն մեկն իր հերթին, էլ-նամակը փոխանցեցին իրենց անձնական կոնտակտներին: Մի շարք Ֆեյսբուքյան էջեր և Յութուբի տեսանյութեր նվիրված էին «Օգնիր Սամիրին» արշավին: Ի վերջո, ոսկրածուծի տվյալների բազայում գրանցվեց մոտ քսանհինգ հազար նոր մարդ, և Բեթիան համընկում գտավ:

Բայց ինչպե՞ս արշավը ստիպեց այսքան մարդու գրանցվել. նրանցից շատ բան չպահանջելով: Դա միակ ճանապարհն է, որով դու կարող ես ստիպել մեկին, ում իրականում չգիտես, ինչ-որ բան անել քո փոխարեն: Դու կարող ես հազարավոր մարդկանց ստիպել, որպեսզի դոնորների գրանցամատյանում գրանցվեն, քանի որ դա անելը շատ հեշտ է: Դու պետք է բերանի խոռոչից քսուք հանձնես և ոսկրածուծի համապատասխան լինելու ամենաանհավանական դեպքում էլ, մի քանի ժամ անցկացնես հիվանդանոցում: Ոսկրածուծ նվիրաբերելը հասարակ հարց չէ: Բայց այն չի ենթադրում ֆինանսական կամ անձնական ռիսկ, դա չի նշանակում ամառը անցկացնել հետախուզման մեջ՝ բեռնատարներով շրջող զինված մարդկանց կողմից: Չի պահանջում, որ դուք դիմագրավեք սոցիալական կարծր նորմերին և պրակտիկային: Իրականում դա այնպիսի մի քայլ է, որը բերելու է միայն սոցիալական ճանաչման և գովեստի խոսքերի:

Սոցիալական մեդիայի ավետողները չեն հասկանում այս տարբերությունը. Նրանց թվում է, թե ֆեյսբուքյան ընկերը նույնն է, ինչ իսկական ընկերը, և որ այսօր Սիլիկոնյան հովտում որպես դոնոր գրանցվելը ակտիվություն է նույն իմաստով, ինչ 1960-ին Գրինսբորոյի պատմական ճաշարանում նստելը: «Սոցիալական ցանցերը մասնավորապես արդյունավետ են մոտիվացիան բարձրացնելու հարցում», - գրում են Աաքերը և Սմիթը: Բայց դա ճիշտ չէ: Սոցիալական ցանցերը արդյունավետ են մասնակցությունը մեծացնելու գործում՝ նվազեցնելով այն մոտիվացիայի մակարդակը, որը մասնակցությունը պահանջում է: «Փրկենք Դարֆուրը» կոալիցիայի ֆեյսբուքյան էջն ունի 1,282,339 հետևորդ: Նրանցից ամեն մեկը միջինում 9 ցենտ նվիրատվություն է արել: Հաջորդը ակտիվ «Դարֆուր» ֆեյսբուքյան բարեգործական խումբն է՝ 22.073 անդամով, ովքեր նվիրաբերել են միջինը երեսունհինգ ցենտ: «Օգնեք Փրկել Դարֆուրը» էջն ունի 2,797 անդամ, որոնք, միջին հաշվով, տվել են տասնհինգ ցենտ: «Սեյվ դարֆուր» կոալիցիայի խոսնակը Newsweek- ին ասաց. «Մենք անապայմանորեն չէինք գնահատելու որևէ մեկի ունեցած ներդրումը այս ջատագովական շարժման մեջ՝ հիմնվելով նրանց նվիրատվությունների վրա: Սա

ուղղակի մարդկանց գրավելու շատ հզոր մեխանիզմ է: Նրանք տեղեկացնում են իրենց համայնքին, միջոցառումների մասնակցում, կամավորություն անում: Դա ինչ-որ բան չէ, որը կարող էք չափել գլխաշորին նայելով»: Այլ կերպ ասած, ֆեյսբուքյան ակտիվությանը հաջողվում է ոչ թե դրդելով մարդկանց գնալ իրական զոհաբերության, այլ դրդելով նրանց գնալ այնպիսի քայլերի, որոնք մարդիկ անում են, երբ այնքան էլ դրդված չեն իրական զոհաբերություն անելու: Մենք շատ հեռու ենք Գրինսբորոյի ճաշարաններից.

Ուսանողները, ովքեր միացել էին 1960-ի ծնռանը Հարավում կազմակերպված նստացույցերին, շարժումը որակեցին որպես «տենդ»: Բայց Քաղաքացիական Իրավունքների Շարժումը ավելի շատ ռազմական արշավի, քան վարակի էր նման: Հազար ինը հարյուր հիսունականների վերջերին, Հարավի տարբեր քաղաքներում արդեն տասնվեց նստացույցեր էին կազմակերպվել, որոնցից տասնհինգը պաշտոնապես կազմակերպվել էին քաղաքացիական իրավունքների պաշտպանությամբ զբաղվող, ինչպիսիք են ԳՄԱԱԱ¹³-ն և ՌՀԿ¹⁴-ն: Շարժումը իրականացնելու հնարավոր վայրերը ուսումնասիրվեցին: Պլաններ մշակվեցին: Շարժման ակտիվիստները գաղտնի վերապատրաստման դասընթացներ էին անցկացնում ապագա ցուցարարաների հետ: Այն, ինչ արեց Գրինսբորոյի չորսը, այս հիմքի արդյունքն էր. Բոլորը ԳՄԱԱԱ-ի Երիտասարդական խորհրդի անդամներ էին: Նրանք սերտ կապերի մեջ էին ԳՄԱԱԱ-ի տեղի մասնաճյուղի ղեկավարի հետ: Նրանք մանրամասն տեղեկացվել էին Դուրհեմում ավելի վաղ տեղի ունեցած նստացույցերի ալիքի մասին և մասնակցել էին ակտիվիստական եկեղեցիներում շարժման հետ կապված մի շարք հանդիպումների: Երբ Գրինսբորոյի նստացույցից հետո շարժումը սկսեց ամբողջ հարավով մեկ տարածվել, քաղաքները, որտեղ տարածվում էր, պատահական չէին: Դրանք այն քաղաքներն էին, որտեղ ի սկզբանե գոյություն

¹³ National Association for the Advancement of Colored People - Գունավոր մարդկանց առաջընթացի ազգային ասոցիացիա: Հիմնադրվել է սևամորթների իրավունքների պաշտպանության համար: Ներկայումս այն հանդիսանում է ամենահին և ազդեցիկ կազմակերպություններից մեկը, որը պայքարում է քաղաքացիական իրավունքների համար:

¹⁴ Congress of Racial Equality - Ռասայական հավասարության կոնգրես - հիմնվել է 1942 թվականին: Կարևոր դեր է խաղացել Քաղաքացիական Իրավունքների Շարժման համար:

ունեցող «օջախներ» կային՝ շարժմանը նպաստող կրթված ու նվիրյալ անդամներով, որոնք պատրաստ էին այսպես կոչված «տենդը» գործողության վերածել:

Միացյալ Նահանգների Քաղաքացիական Իրավունքների Շարժումը բարձր ռիսկայնություն ունեցող քաղաքացիական ակտիվության օրինակ էր: Այն խիստ ճշգրտությամբ և կարգապահությամբ նախաձեռնած ռազմավարական շարժում էր: ԳՄԱԱԱ-ն ղեկավարվում էր Նյու Յորքից՝ ենթարկվելով պաշտոնական ընթացակարգերին: Հարավային քրիստոնեական առաջնորդության կոնֆերանսը ղեկավարում էր Մարտին Լյութեր Քինգ կրտսերը: Շարժման կենտրոնում սևական համայնքի եկեղեցին էր, որը, ինչպես Ալդոն Դ. Մորիսն է նշում իր՝ 1984-ի «Քաղաքացիական Իրավունքների Շարժման Ծագումը» խորագրով ուսումնասիրության մեջ, ուներ ստույգ աշխատանքի բաժանում՝ տարբեր մշտական հանձնաժողովներով և հատուկ կարգապահական խմբերով: «Յուրաքանչյուր խումբ ուներ իրեն տրված կոնկրետ հանձնարարությունը, և իր գործունեությունը համակարգվում էր ըստ հեղինակային կառույցների նորմերի», - գրում է Մորիսը: - «Անհատները պատասխանատու էին իրենց նշանակված հանձնարարությունների համար, և կոնֆլիկտները լուծվում էին գլխավոր նախարարի կողմից, ով հանձնաժողովի լիազոր մարմին էր համարվում»:

Սա արդեն ավանդական ակտիվության և դրա առցանց տարբերակի միջև եղած երկրորդ, կարևորագույն տարբերությունն է. սոցիալական մեղիան այսպիսի հիերարխիկ կառուցվածքի հետ կապ չունի: Ֆեյսբուքը և այլ նման օնլայն հարթակներ, ցանցեր ստեղծելու գործիքներ են: Իսկ այդ ցանցերը, կառուցվածքով և բնույթով հիերարխիայի լրիվ հակառակ պատկերն են: Ի տարբերություն հիերարխիաների, իրենց կանոններով և ընթացակարգերով, ցանցերը չեն վերահսկվում մեկ կենտրոնական մարմնի կողմից: Որոշումներն ընդունվում են համաձայնության միջոցով, և կապերը, որոնք մարդկանց կապում են ընդհանուրի հետ, այնքան էլ ամուր չեն:

Այս կառուցվածքը ցանցերը դարձնում է չափազանց ճկուն և հարմարեցված ցածր ռիսկային իրավիճակներին: Վիքիպեդիան հիանալի օրինակ է: Նյու Յորքում նստած խմբագիր չունի, ով ուղղորդում և ուղղում է արված յուրաքանչյուր գրառում: Յուրաքանչյուր գրառման վրա ծախսված ջանքերը անհատական են: Եթե Վիքիպեդիայում յուրաքանչյուր գրառում պետք է ջնջվի վաղը, բովանդակությունն արագ կվերականգնվի, որովհետև դա այն է, ինչ տեղի է ունենում այն դեպքում, երբ նույն ցանցում ընդգրկված հազարավոր մարդիկ ինքնաբուխ կերպով իրենց ժամանակը նվիրում են նույն առաջադրանքին:

Այնուամենայնիվ, շատ բաներ կան, որ ցանցերը լավ չեն կազմակերպում: Ավտոմեքենաների ընկերությունները, օրինակ, խելամտորեն օգտագործում են այն՝ իրենց հարյուրավոր մատակարարներին կազմակերպելու համար, բայց ոչ իրենց մեքենաները նախագծելու համար: Ոչ ոք չի հավատում, որ դիզայնի հարցը լավագույնս կլուծվի այսպես կոչված փռված կազմակերպչական համակարգի միջոցով: Քանի որ ցանցերը չունեն դեկավարման կենտրոնացված կառուցվածք, նրանց հիմնական խնդիրը կայանում է համաձայնության գալու և նպատակներ դնելու մեջ: Նրանք չեն կարողանում ստրատեգիապես մտածել, քանի որ քրոնիկ կերպով հակված են հակասությունների և սխալներ գործելուն: Ինչպե՞ս եք մարտավարության, ռազմավարության կամ փիլիսոփայական ուղղության վերաբերյալ բարդ որոշումներ կայացնում, երբ բոլորը հավասար ասելիք ունեն :

«Պաղեստինի Ազատագրման Կազմակերպություն»¹⁵-ը ստեղծվել է որպես ցանց, և միջազգային հարաբերությունների ոլորտի մասնագետներ Մեթտե Էլիստրուպ-Սանգովոանին և Կալվերտ Ջոնսը վերջերս հրապարակված Միջազգային Անվտանգություն խորագրով հոդվածում պնդում են. «Ցանցերին բնորոշ կառուցվածքային առանձնահատկությունները՝ վերահսկող կենտրոնական մարմնի

¹⁵ The Palestine Liberation Organization - 1964 թվականին ստեղծված քաղաքական և խորհրդարանային կազմակերպություն ՄԱԿ-ի և ավելի քան 100 պետությունների կողմից (ում հետ ՊԱԿ-ը դիվանագիտական հարաբերություններ է պահպանում, իսկ 1974 թվականից ՄԱԿ-ում ունի դիտորդի կարգավիճակ) և ճանաչված է որպես «Պաղեստինյան ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչը»:

բացակայությունը, մրցակից խմբերի չստուգված գործունեությունը և ֆորմալ մեխանիզմների միջոցով վեճեր կարգավորելու անկարողությունը — «Պաղեստինի Ազատագրման կազմակերպություն»-ը դարձրել են չափազանց խոցելի արտաքին դրսևորումների և ներքին կոնֆլիկտների հանդեպ»:

Հազար ինը հարյուր յոթանասունականներին՝ Գերմանիայում, նրանք դեռ շարունակվում են. «Շատ ավելի միասնական և հաջողակ ընդդիմադիրները հակված էին իրենց գործունեությունը կազմակերպել հիերարխիկ կերպով՝ աշխատանքի հստակ բաժանումներով և պրոֆեսսիոնալ ղեկավարմամբ: Նրանք կենտրոնացած էին համալսարաններում, որտեղ կարող էին կանոնավոր, դեմ առ դեմ հանդիպումների միջոցով կենտրոնական ղեկավարություն, վստահություն և բարեկամություն հաստատել»: Նրանք հազվադեպ էին իրենց զինակիցներին ոստիկանության հարցաքննությունների ժամանակ մատնում: Իրենց աջ թևի աջակիցները ավելի ցանցային և ապակենտրոնացված էին, հետևաբար. նման կարգապահություն չունեին: Այս խմբերը հեշտությամբ բացահայտվում էին, և անդամները, ձերբակալվելու և պես, հեշտությամբ հրաժարվում էին իրենց ընկերներից: Նման կերպ, «Ալ Քաիդա»-ն, երբ միավորված հիերարխիա էր, ամենավտանգավոր խումբն էր համարվում: Հիմա, երբ ցրվել է ցանցում, այն ապացուցում է, որ շատ ավելի անարդյունավետ է:

Ցանցերի թերությունները կարևորություն չունեն, եթե դրանք շահագրգռված չեն համակարգային փոփոխություններ անելու: Եթե պարզապես ուզում են վախեցնել, նվաստացնել կամ փչացնել, կամ երբ ստրատեգիական մտածողությունը չի կարևորում: Բայց եթե դու ստեղծում ես հզոր և կազմակերպված հաստատություն, ապա պետք է հիերարխիա լինել: Մոնտգոմերի ավտորուսի բոյկոտն իրականացնելու համար պահանջվում էր տասնյակ հազարավոր մարդկանց մասնակցություն, որոնք կանոնավոր կերպով օգտվում էին հասարակական տրանսպորտից՝ ամեն օր աշխատանքի գնալու և աշխատանքից տուն գալու համար: Դա տևեց մեկ տարի: Որպեսզի համոզեն այդ մարդկանց հավատարիմ մնալ գործին, բոյկոտի

կազմակերպիչները հանձնարարեցին յուրաքանչյուրին տեղական սևամորթների համայնքի եկեղեցուն պահպանել կարգապահ վիճակը և առաջարկել անվճար այլընտրանքային մասնավոր քարփուլ ծառայություն` քառասունութ դիսպետչերներով և քառասուներկու կանգառներով: Նույնիսկ Սպիտակամորթ Քաղաքացիների Խորհուրդը, հետագայում նշել է Քինգը, խոստովանեց, որ քարփուլի համակարգը գործում էր «ռազմական ճշգրտությամբ»: Երբ Քինգը եկավ Բիրմինգհեմ, ոստիկանության կոմիսար Եվգենի (Բուլլ) Քոնորի հետ վերջնական դիմադրության համար, նա ուներ միլիոն դոլար արժողությամբ բյուջե, և հարյուր լրիվ դրույքով աշխատող, ըստ ստորաբաժանումների: Գործողությունը վերահսկվում և աջակցվում էր անընդմեջ իրականացվող զանգվածային հանդիպումների միջոցով` քաղաքի շուրջ եկեղեցուց եկեղեցի պտտվելով:

Բոյկոտները, նստացույցերը և ոչ բռնի բախումները, որոնք Քաղաքացիական Իրավունքների Շարժման ընտրած գործիքներն էին, համարվում են մեծ ռիսկ պարունակող ռազմավարություններ: Նրանք հակամարտությունների և սխալների համար քիչ տեղ են թողնում: Եթե նույնիսկ շարժման անդամներից մեկը տրվի սադրանքներին, ողջ շարժման լեգիտիմությունը կասկածի տակ է դրվում: Սոցիալական մեդիայի հետևորդները մեզ կկարողանային հավատացնել, որ Բիրմինգհեմում Քինգի գործառույթն ավելի դյուրին կլիներ, եթե նա կարողանար Ֆեյսբուքի միջոցով շփվել իր հետևորդների հետ, և իրեն Բիրմինգհեմի բանտից թվիթերով գոհացներ: Բայց ցանցերը համակարգված չեն: Հիշեք Վիքիպեդիայի օրինակը. այն ուղղումների ու վերանայման, շտկման ու վիճարկման մի անվերջ գործընթաց է: Եթե Մարտին Լյութեր Քինգ կրտսերը փորձեր վիքի-բոյկոտ անել Մոնթգոմերիում, նա կվերացվեր սպիտակամորթերի ուժային կառույցի կողմից: Իսկ որո՞նք կլինեն թվային հաղորդակցման գործիքները մի քաղաքում, որտեղ սևամորթների համայնքի ինստիտուցիոնալ տոկոսին հեշտորեն կարելի էր գտնել ամեն կիրակի առավոտյան, սևերի համայնքային եկեղեցում: Բիրմինգհեմում Քինգին անհրաժեշտ բաները կարգապահությունը և ռազմավարությունն էին, որոնք առցանց սոցիալական հարթակները չէին կարող ապահովել:

Սոցիալական մեդիայի շարժման այսպես կոչված աստվածաշունչը Քլեյ Շիրքի «Here Comes Everybody» (Ահա և բոլորը եկան) գիրքն է: Շիրքին, ով դասավանդում է Նյու Յորքի համալսարանում, ցույց է տալիս Համացանցի կազմակերպչական ուժը՝ սկսելով Ուոլ Սթրիթում աշխատող Էվանի և նրա ընկեր Իվանայի պատմությամբ, ով իր բջջային հեռախոսը՝ Թ-մոբիլի թանկանոց Սայդփիքը, մոռացել էր Նյու Յորքի տաքսիներից մեկի հետևի նստատեղում: Հեռախոսային ընկերությունը Իվանայի կորցրած հեռախոսի վերաբերյալ տվյալները փոխանցեց նոր հեռախոսին, որի արդյունքում նա և Էվանը հայտնաբերեցին, որ Սայդփիքը այժմ գտնվում է Քուինսից մի դեռահասի մոտ: Վերջինս օգտագործում էր այն իրեն և իր ընկերներին լուսանկարելու համար:

Երբ Էվանը նամակ ուղարկեց դեռահասին՝ Սաշային, հեռախոսը հետ խնդրելու համար, նա պատասխանեց, որ նրա սպիտակ հետույքը արժանի չէր դրան: Էվանը ստեղծեց մի վեբ էջ, որտեղ տեղադրեց իր նկարը և կատարվածի նկարագրությունը: Նա հղումը փոխանցեց իր ընկերներին, նրանք էլ իրենց հերթին փոխանցեցին այն իրենց ընկերներին: Արդյունքում, ինչ-որ մեկը գտավ Սաշայի ընկերոջ Մայսփեյս-ի էջը, և դրա հղումը տեղադրեց կայքում: Ինչ-որ մեկը գտավ նրա հասցեն առցանց և այդ տարածքում մեքենա վարելիս տեսանյութ նկարեց Սաշայի տան տարածքում: Տեսանյութը Էվանը տեղադրեց կայքում: Պատմությունը վերցրեց Դիգգ լրատվական ֆիլտրը: Էվանը բոլորում մինչև տաս էլեկտրոնային նամակ էր ստանում: Նա իր հետևորդների համար հարթակ ստեղծեց, որպեսզի իրենք էլ կարողանան կիսվել իրենց պատմություններով, բայց հարթակը, գերծանրաբեռնվածության պատճառով երկար չաշխատեց: Էվանն ու Իվանան գնացին ոստիկանություն, բայց ոստիկանությունը տեղի ունեցածը որակեց որպես «կորուստ», «գողության» փոխարեն, ինչը, ըստ էության, փակեց գործը: Լրատվամիջոցները լուսաբանել էին պատմությունը արդեն իսկ որակելով այն որպես «գողություն»: Սաշան ձերբակալվեց և Էվանը հետ բերեց իր ընկերոջ Սայդփիքը:

Շիրքիի փաստարկը այն է, որ նման իրողություն երբեք չէր կարող պատահել նախահնտերնետային դարաշրջանում: Իսկապես, նա ճիշտ է: Էվանը երբեք չէր կարողանա հետևել Սաշային: Սայդքիքի պատմությունը երբեք չէր հրապարակվի: Այդքան մեծ թվով մարդիկ երբեք չէին կարող հավաքվել այս պայքարը իրականացնելու համար:

Պատմությունը, ըստ Շիրքիի, ցույց է տալիս ինտերնետային դարում հասանելի «հեշտությունը և արագությունը, որով մարդկանց մի ամբողջ խումբ կարող է մոբիլիզացվել ճիշտ գործի համար»:

Շիրքին ակտիվիզմի այս մոդելը համարում է արդիականացում: Բայց դա պարզապես կազմակերպման մի ձև է, որը նպաստում է թույլ կապերին մեզ հնարավորություն տալ տեղեկատվություն ունենալ ուժեղ կապի վերաբերյալ, որոնք օգնում են մեզ վտանգից խուսափել: Այն շեղում է մեր ուշադրությունը ստրատեգիական ակտիվությունից դեպի նրանց նկատմամբ, որոնք նպաստում են ձկունության և հարմարվողականության ապահովմանը: Ակտիվիստների համար ավելի հեշտ է դառնում արտահայտվել, և միևնույն ժամանակ ավելի դժվար`որևէ ազդեցություն ունենալ: Սոցիալական մեդիայի գործիքները հարմար են առկա սոցիալական կարգը ավելի արդյունավետ դարձնելու համար: Դրանք ընդդեմ չեն ստատուս քվոյին:

Եթե կարծում ես, որ աշխարհին հարկավոր է ընդամենը մի փոքր եզրերը տաշել, ապա սա քեզ չի անհանգստացնի: Բայց եթե կարծում ես որ դեռ կան այսպիսի ճաշարաններ, որ կարիք ունեն ինտեգրվելու, այն պետք է որ մի պահ կանգնեցնի քեզ:

Շիրքին ավարտում է կորած Սայդքիքի պատմությունը` մարգարեական հարցադրումով. «Ի՞նչ է լինում սրանից հետո», վստահաբար պատկերացնելով թվային ակտիվիստների ապագա ալիքները: Ապագա թվային ակտիվիստների ալիքը պատկերացնելու որևէ կասկած չկա: Բայց նա արդեն պատասխանել է այս հարցին:

Թե ինչ կլինի հաջորդը, քիչ թե շատ նույնն է: Ցանցային, կապող աշխարհը, օրինակ, ահագին կօզնի Վոլ Սթրիթին հեռախոսներ վերադարձնել դեռահաս աղջիկներից:

Viva la revolución: ♦

Պարզաբանում. Գրինսբորոյի նստացույցի այս կտորի պատմությունը գրվել է Մայլս Ուոլֆի “Lunch at the Five and Ten”-ի հիման վրա (1970):

References

- Arnold, T., & Sampson, W. (2014). Preserving the Voices of Revolution: Examining the Creation and Preservation of a Subject-Centered Collection of Tweets from the Eighteen Days in Egypt. *The American Archivist*, 77(2), 510-533.
- Clarke K., & Koçak K.(2019). Eight years after Egypt's revolution, here's what we've learned about social media and protest. *The Washington Post*. Retrieved from <https://www.washingtonpost.com/news/monkey-cage/wp/2019/01/25/eight-years-after-egypts-revolution-heres-what-weve-learned-about-social-media-and-protest/>
- Freire, P. (1985). *The politics of education: Culture, power, and liberation*. South Hadley, Mass: Bergin & Garvey
- Iskandaryan, A.,(2018). The Velvet Revolution in Armenia: How to Lose Power in Two Weeks. *Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization*, Volume 26, Number 4, Fall 2018, pp. 465-482
- Juris, J. (2005). The New Digital Media and Activist Networking within Anti-Corporate Globalization Movements. *The Annals of the American Academy of Political and Social Science*, 597, 189-208.
- Malchik, A. (2019). The Problem With Social-Media Protests. Retrieved from <https://www.theatlantic.com/technology/archive/2019/05/in-person-protests-stronger-online-activism-a-walking-life/578905/>

Tawil-Souri, H. (2012). Egypt's Uprising and the Shifting Spatialities of Politics. *Cinema Journal*, 52(1), 160-166.

Westheimer, J. & Kahne, J. (2004) Educating the “good” citizen: Political choices and pedagogical goals. *Political Science & Politics*, 38(2), 1-7.
<http://democraticdialogue.com/DDpdfs/WestheimerKahnePS.pdf>

Yang, G. (2016). Activism. In Peters B. (Ed.), *Digital Keywords: A Vocabulary of Information Society and Culture* (pp. 1-17). Princeton; Oxford: Princeton University Press.
doi:10.2307/j.ctvct0023.5

Gladwell, M., 2010. *Small Change - The New Yorker*. [online] The New Yorker. Available at:
<<http://www.newyorker.com/magazine/2010/10/04/small-change-malcolm-gladwell>>